ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, քաղաք Բերդ

Երկու հազար տասնհինգ թվականի նոյեմբերի իններին

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքը, գտնվելու վայրը՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Լևոն Բեկի փողոց թիվ 5(հինգ), այսուհետ՝ **«Վարձատու»,** ի դեմս համայնքի ղեկավար Հարություն Կալինի Մանուչարյանի, հաշվառված՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Վարդանանց փողոց, թիվ 46/քառասունվեց/, որ գործում է Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով, որի անունից երկու հազար տասնհինգ թվականի հոկտեմբերի տասնվեցին համայնքի ղեկավարի կողմից տրված լիազորագրով հանդես է գալիս աշխատակազմի գլխավոր մասնագետ Դավիթ Սուրենի Մելիքյանը, ծնված՝ 14.06.1954 թվականին, անձնագիր՝ AM0577074, տրված՝ 23.12.2011 թվականին 056-ի կողմից, հաշվառված՝քաղաք Բերդ, Ռ.Մելիքյան փողոց, տուն 13/տասներեք/, մի կողմից, և **Հայաստանի Հանրապետությունը,** այսուհետ՝ **«Վարձակալ»,** որի անունից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, 13/տասներեք/, աշխատակազմի ղեկավար Մինաս Մկրտչի Մինասյանի կողմից 2015/երկու հազար տասնհինգ/ թվականի նոյեմբերի 03-ին/երեքին/ տրված լիազորագրով հանդես է գալիս Մաթևոս Էդվարդի Ծատուրյանը, ծնված՝ 20.12.1957 թվականին, անձնագիր՝ AK0632881, տրված՝ 13.10.2010 թվականին 056-ի կողմից, հաշվառված՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Այգեստան փողոց, տուն 4/չորս/, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող **Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Լևոն Բեկի 5(հինգ)** հասցեում գտնվող անշարժ գույքից՝ վարչական շենք և հողամաս, 114,94/հարյուր տասնչորս ամբողջ ինսունչորս հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով ոչ բնակելի տարածք, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականում երրորդ հարկի թիվ 8/ութ/ սենյակը՝ 19,04/տասնիննը ամբողջ չորս հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, թիվ 9/իններ/ սենյակը՝ 19,04/տասնիննը ամբողջ չորս հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, թիվ 10/տաս/ սենյակը՝ 19,04/տասնիննը ամբողջ չորս հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, թիվ 17/տասնյոթ/ սենյակը՝ 19,17/տասնիննը ամբողջ տասնյոթ հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, թիվ 18/տասնութ/ սենյակը՝ 19,17/տասնիննը ամբողջ տասնյոթ հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, երկրորդ հարկի թիվ 7/յոթ/ սենյակը՝ 19,48/տասնիննը ամբողջ քառասունութ հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, ինչպես նաև հողամասի համապատասխան բաժինը, այսուհետև «Անշարժ գույք», Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի Տավուշի սոցիալական ապահովության տարածքային բաժնի աշխատանքները իրականացնելու համար:

Անշարժ գույքի հատակագիծը կցվում է պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

1.2.Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 5/հինգ/ տարի ժամկետով:

1.3.Վարձակալության հանձնվող Անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, ինչը հաստատվում է 0265640 Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականով, տրված 2001/երկու հազար մեկ/ թվականի մայիսի 11/տասնմեկ/-ին Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Բերդի տարածքային ստորաբաժանման կողմից:

1.4.Սույն պայմանագիրը կնքելու պահին Անշարժ գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան, այն ազատ է երրորդ անձանց իրավունքներից, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Տավուշ տարածքային ստորաբաժանման կողմից 2015/երկու հազար տասնհինգ/ թվականի հոկտեմբերի 27-ին/քսանյոթին/ տրված Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ թիվ ՄՏ-27102015-11-0025 միասնական տեղեկանքի, գաղտնաբառ՝ VPVCFZ5YAVNP:

1.5.Վարձակալության հանձնված Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

1.6.Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագիրը կնքելու պահին Անշարժ գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան, այն ազատ է երրորդ անձանց իրավունքներից, այլ անձանց վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ, արգելանքի, կալանքի տակ չի գտնվում, այլ անձանց վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված չէ:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1.պահանջել Վարձակալից՝ Անշարժ գույքն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան,

2.1.2.Վարձակալի կողմից վարձավճարը վճարելու էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը:

2.1.3.եթե Վարձակալը Անշարժ գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները,

2.2.Վարձատուն պարտավոր է՝

2.2.1.Անշարժ գույքը Վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 1(մեկ) օրվա ընթացքում: Հանձնման-ընդունման ակտը ստորագրում են Վարձատուն և Վարձակալը,

2.2.2.Անշարժ գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում,

2.2.3.Անշարժ գույքը վարձակալին հանձնել դրան վերաբերող փաստաթղթերով,

2.2.4.Իր հաշվին կատարել վարձակալության հանձնված Անշարժ գույքի հիմնական վերանորոգումը,

2.2.5.Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Անշարժ գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավ, սերվիտուտ, վարձակալություն, անհատույց օգտագործում և այլն) մասին,

2.2.6.Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Անշարժ գույքի թերությունները կամ համաչափ իջեցնել վարձավճարը,

2.2.7.մեկամսյա ժամկետում քննարկել Անշարժ գույքի նշանակության փոփոխման, ինչպես նաև դրա վերանորոգման և վերասարքավորման հարցերի հետ կապված Վարձակալի դիմումները,

2.2.8.ոչ ուշ, քան 2(երկու) ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Անշարժ գույքն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքի հիմնական վերանորոգում կատարելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ,

2.2.9.Վարձակալի հաշվին կնքել վարձակալության հանձնվող Անշարժ գույքի ապահովագրության պայմանագիր:

<u>2.3.Վարձակալն իրավունք ունի՝</u>

2.3.1.պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 2.2.1.կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Անշարժ գույքը, Անշարժ գույքին վերաբերող փաստաթղթերը,

2.3.2.Անշարժ գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.2.1.Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Անշարժ գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Անշարժ գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը,

2.3.2.2.Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը,

2.3.2.3.պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը,

2.3.3.պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Անշարժ գույքի վիճակը վատթարացել է,

2.3.4.Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու սույն պայմանագրում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.4.1.կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին,

2.3.4.2.պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը,

2.3.4.3.պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները,

<u>2.4.Վարձակալը պարտավոր է՝</u>

2.4.1.Անշարժ գույքն օգտագործել պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան,

2.4.2.ժամանակին մուծել Անշարժ գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վարձավճարը,

2.4.3.պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում ժամանակին փոխանցել Անշարժ գույքի ապահովագրական վճարը,

2.4.4.ժամանակին կատարել վարձակալված Անշարժ գույքի ընթացիկ վերանորոգումը,

2.4.5.ապահովել Անշարժ գույքի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը,

2.4.6.առանց Վարձատուի գրավոր համաձայնության վարձակալված տարածքում չկատարել փակ և բաց լարանցումներ, չանել վերանախագծումներ և վերապլանավորումներ: Վարձակալի կողմից Անշարժ գույքի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում դրանք պետք է վերացվեն, իսկ տարածքը բերվի իր նախկին տեսքին՝ Վարձակալի հաշվին և Վարձատուի որոշած ժամկետում,

2.4.7.Վարձակալած տարածքում պահպանել սանիտարահամաճարակային, պետական հրշեջ վերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաև բոլոր կանոնները և նորմերը, որոնք գործում են վարձակալի գործունեության ձևերի ու վարձակալված Անշարժ գույքի նկատմամբ,

2.4.8.Վարձատուի որոշած ժամկետներում ազատել տարածքները՝ կապված Անշարժ գույքի (կամ դրա մի մասի) կառուցվածքների վթարային վիճակի, Անշարժ գույքը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու հետ,

2.4.9.Անշարժ գույքը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ սանիտարական վիճակում,

2.4.10.Վարձատուին անմիջապես տեղեկացնել Անշարժ գույքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Անշարժ գույքին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև Անշարժ գույքը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ,

2.4.11.առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ (իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեջ Անշարժ գույքի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում): Առանց նշված համաձայնության վարձակալի կողմից նման պայմանագրեր կնքելը կամ նման գործարքներ կատարելը հիմք է պայմանագրի միակողմանի լուծման համար,

2.4.12.ապահովել Վարձատուի և նրա ներկայացուցիչների անարգել մուտքն Անշարժ գույք՝ դրա զննման և ստուգման համար,

2.4.13.ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական դեպքը վրա հասնելու դեպքում անհապաղ այդ միասին հաղորդել համապատասխան իրավասու մարմիններին (ոստիկանություն, հրշեջ ծառայություն, հաղորդակցության ուղիների անվտանգությունն ապահովող ծառայություն և այլն) և ապահովագրական կազմակերպությանը՝ վերջինիս ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռելով գնել տարածքը,

2.4.14.ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Անշարժ գույքի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ:

2.4.15.վարձակալված տարածքն ազատելիս այն պատշաճ վիճակում, ակտով հանձնել Վարձատուին՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը,

2.4.16.սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգի տակ են դնում Անշարժ գույքը, իսկ վարձակալված տարածքից դուրս՝ բնապահպանական և սանիտարական իրավիճակը:

2.4.17.իր հաշվին կատարել օգտագործված էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և այլ վճարումները:

3.ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1.Վարձակալած Անշարժ գույքի համար վարձաչափ է սահմանվում տարեկան 1379280/մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունինները հազար երկու հարյուր ութսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ, որը վճարվում է անկանխիկ, եռամսյակը մեկ, մինչև յուրաքանչյուր տարվա վերջը:

3.2.Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2 կետով, վարձավճարը կհաշվարկվի և կվճարվի սկսած 2015/երկու հազար տասնհինգ/ թվականի օգոստոսի 18-ից/տասնութից/, քանի որ տարածքը փաստացի օգտագործվում է նշված ժամանակվանից:

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2.Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Անշարժ գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.3.Վարձատուն պատասխանատվություն չի կրում Անշարժ գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի է եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալը հայտնաբերեր Անշարժ գույքը զննելիս:

5.ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՕԲՅԵԿՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

5.1.Վարձակալած Անշարժ գույքի Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

5.2.Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Անշարժ գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

5.3.Վարձակալի կողմից առանց Վարձատուի համաձայնության կատարած վարձակալած Անշարժ գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

5.4.Վարձակալած Անշարժ գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

6.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1.Վարձատուի պահանջով, օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

6.1.1.Անշարժ գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով,

6.1.2.էականորեն վատթարացրել է Անշարժ գույքի վիճակը,

6.1.3.սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը,

6.1.4.սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Անշարժ գույքի ընթացիկ վերանորոգումը:

6.2.Վարձակալի պահանջով, օրենքով սահմանված կարգով, սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝

6.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Անշարժ գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Անշարժ գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար,

6.2.2.Վարձակալին հանձնված Անշարժ գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս,

6.2.3.հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Անշարժ գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

7.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայնագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը հրդեհը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1.Անշարժ գույքի (շենքերի, շինությունների) վրա արտաքին գովազդի և տեղեկատվության առարկաների տեղադրումն իրականացնում է Վարձակալը կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքած անձը՝ Վարձատուի համաձայնությամբ:

8.2.Սույն պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30(երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

8.3.Սույն պայմանագրում կատարվող բոլոր լրացումները և փոփոխությունները, պայմանագրի վաղաժամկետ լուծումը կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 468 հոդվածով սահմանված կարգով:

8.4.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

8.5.Սույն պայմանագրի նոտարական կարգով վավերացման և իրավունքի պետական գրանցման ծախսերը վճարում է **Վարձակալը:**

8.6.Սույն պայմանագիրը կողմերի ցանկությամբ կազմված է 4(չորս) օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Մեկական օրինակ պահվում են Տավուշ նոտարական գրասենյակում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, իսկ մյուս օրինակները տրվեցին կողմերին: Բնօրինակը համարվում է նոտարի մոտ պահվող օրինակը, իսկ բնօրինակի և մյուս օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է բնօրինակին:

Սույն պայմանագիրը բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից մինչև այն ստորագրելը:

ՎԱՐՁԱՏՈՒ՝
Տավուշի մարզի Բերդ համայնք
գտնվելու վայրը՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Լևոն Բեկի փողոց թիվ 5(հինգ)
Լիազորված անձ՝ Դավիթ Սուրենի Մելիքյան, հաշվառված՝քաղաք Բերդ, Ռ.Մելիքյան 13(տասներեք)

ՎԱՐՁԱԿԱԼ՝
Հայաստանի Հանրապետություն
Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի
գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, 13/տասներեք/
լիազորված անձ՝ Մաթևոս Էդվարդի Ծատուրյան, հաշվառված՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Այգեստան փողոց, տուն 4/չորս/

Երկու հազար տասնհինգ թվականի նոյեմբերի իններին

սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշ նոտարական տարածքի նոտար Գոհար Սուրենի Նավասարդյանիս կողմից: Կողմերը պայմանագիրն ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ Բերդ համայնքի իրավունքներն ստուգված են:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում թիվ՝ 1314 ով
Գանձված է պետական տուրք՝ 5000 դրամ, և ծառայության վճար՝ 15000 դրամ, պետական տուրքի և Նոտարիատի մասին ՀՀ օրենքների համաձայն

Նոտար՝ Գոհար Սուրենի Նավասարդյան

ԵՐԵՎԻ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ՇԵՐՏԱՅԻՆ ԹԻՎ 1

1:200

/Ցուցակով/



ԵՐԿՐՈՄԻ ՀԱՐԿ

H = 3.20

h = 3.0

D = 0.40

d = 0.10

d_1 = 0.20 ÷ 0.25

ԿԱՏԱՐՈՂ Կ. Խաչատրյան /Կ. Խաչատրյան/

/ստորագրություն/

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:200

/մասշտաբ/

ՆԵՐԴԻՐ ԹԻՎ 2



ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿ

H = 3.20

h = 3.0

Δ = 0.40

d = 0.10

d_1 = 0.20 ÷ 125

ԿԱՏԱՐՈՂ Կ. [signature] /Կ. Ֆայոյան/

/ստորագրություն/

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, քաղաք Ընդ

հազար տասնհինգ թվականի դեկտեմբերի տասնութին

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ընդ համայնքը, գտնվելու վայրը՝ Տավուշի մարզ, քաղաք Ընդ, Լևոն Ընկի փողոց թիվ 5(հինգ), այսուհետ՝ **«ԿՈՂՄ-1»,** ի դեմս համայնքի ղեկավար Հարություն Կալինի Մանուչարյանի, հաշվառված՝ Տավուշի մարզ, քաղաք Ընդ, Վարդանանց փողոց, թիվ 46/քառասունվեց/, որ գործում է Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով, որի անունից երկու հազար տասնհինգ թվականի դեկտեմբերի տասնութին համայնքի ղեկավարի կողմից տրված լիազորագրով հանդես է գալիս աշխատակազմի գլխավոր մասնագետ Դավիթ Սուրենի Մելիքյանը, ծնված՝ 14.06.1954 թվականին, անձնագիր՝ AM0577074, տրված՝ 23.12.2011 թվականին 056-ի կողմից, հաշվառված՝քաղաք Ընդ, Ռ.Մելքիյան փողոց, տուն 13/տասներեք/, մի կողմից, և **Հայաստանի Հանրապետությունը,** այսուհետև „**Կողմ-2**„ որի անունից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, 13/տասներեք/, աշխատակազմի ղեկավար Մինաս Մկրտչի Մինասյանի կողմից 2015/երկու հազար տասնհինգ/ թվականի դեկտեմբերի 11-ին/տասնմեկին/ տրված լիազորագրով հանդես է գալիս Մաթևոս Էդվարդի Ծատուրյանը, ծնված՝ 20.12.1957 թվականին, անձնագիր՝ AK0632881, տրված՝ 13.10.2010 թվականին 056-ի կողմից, հաշվառված՝ Տավուշի մարզ, քաղաք Ընդ, Այգեստան փողոց, տուն 4/չորս/, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, որոշել են 2015/երկու հազար տասնհինգ/ թվականի նոյեմբերի 09-ին/իններին/ կնքված և Հայաստանի Հանրապետության Տավուշ նոտարական տարածքի նոտար Գոհար Սուրենի Նավասարդյանի կողմից թիվ 1314-ով վավերացված Անշարժ գույքի վարձակալության պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) մտցնել հետևյալ փոփոխությունները.

1.1.Պայմանագրի 1.1.կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. „Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող **Տավուշի մարզ, քաղաք Ընդ, Լևոն Ընկի 5(հինգ)** հասցեում գտնվող անշարժ գույքից՝ վարչական շենք և հողամաս, 70/յոթանասուն/ քառակուսի մետր մակերեսով ոչ բնակելի տարածք, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականում երրորդ հարկի թիվ 9/իններ/ սենյակը՝ 19,04/տասնիններ ամբողջ չորս հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, 19,04/տասնիններ ամբողջ չորս հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով թիվ 10/տաս/ սենյակից մաս՝ 12,62/տասներկու ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, թիվ 17/տասնյոթ/ սենյակը՝ 19,17/տասնիններ ամբողջ տասնյոթ հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, թիվ 18/տասնութ/ սենյակը՝ 19,17/տասնիններ ամբողջ տասնյոթ հարյուրերորդական/ քառակուսի մետր մակերեսով, ինչպես նաև հողամասի համապատասխան բաժինը, այսուհետև «Անշարժ գույք», Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի Տավուշի սոցիալական ապահովության տարածքային բաժնի աշխատանքները իրականացնելու համար: Անշարժ գույքի հատակագիծը կցվում է պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը„:

1.2. Պայմանագրի 1.2.կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. „Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 2020/երկու հազար քսան/ թվականի օգոստոսի 18-ը/տասնութը/ ժամկետով„:

1.3. Պայմանագրի 3.1.կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. „Վարձակալած Անշարժ գույքի համար վարձաչափ է սահմանվում տարեկան 840000/ութ հարյուր քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, որը վճարվում է անկանխիկ, եռամսյակը մեկ, մինչև յուրաքանչյուր տարվա վերջը„:

1.4.Պայմանագրի 3.2.կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. „Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ, վարձավճարը կհաշվարկվի և կվճարվի սկսած 2015/երկու հազար տասնհինգ/ թվականի օգոստոսի 18-ից/տասնութից/, քանի որ Վարձակալը տարածքը փաստացի օգտագործում է նշված ժամանակվանից, ընդ որում՝ նախկին 6/վեց/ սենյակների փոխարեն 2015/երկու հազար տասնհինգ/ թվականի օգոստոսի 18-ից/տասնութից/ օգտագործում է 4/չորս/ սենյակ„:

2.Պայմանագրի մնացած կետերը թողնվում են անփոփոխ:

3.Եթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանում, և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4.Սույն համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը վճարում է Կողմ-2-ը:

5. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնցից մեկը պահվում է Տավուշ նոտարական գրասենյակում, մյուս օրինակները տրվեցին կողմերին:

ԿՈՂՄ- 1՝

Տավուշի մարզի Բերդ համայնք

գտնվելու վայրը՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Լևոն Բեկի փողոց թիվ 5(հինգ)

Լիազորված անձ՝ Դավիթ Սուրենի Մելիքյան, հաշվառված՝քաղաք Բերդ, Ռ.Մելիքյան 13/տասներեք/

ԿՈՂՄ -2՝

Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, 13/տասներեք/

Լիազորված անձ՝ Մաթևոս Էդվարդի Ծատուրյան, հաշվառված՝ Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Այգեստան փողոց, տուն 4/չորս/

Երկու հազար տասնհինգ թվականի դեկտեմբերի տասնութին

Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշ նոտարական տարածքի նոտար Գոհար Սուրենի Նավասարդյանիս կողմից:

Կողմերը փաստաթուղթն ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում թիվ՝ 1463 ով

Գանձված է պետական տուրք՝ 2000 դրամ, և ծառայության վճար՝ 8000 դրամ, համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների

ԳՈՀԱՐ

Գոհար Սուրենի Նավասարդյան

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:200

/հատված/

ՆԵՐԴԻՐ ԹԻՎ 2



ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿ

H=3.20

h=3.0

δ=0.40

d=0.10

d_1=0.20÷1.25

վարձակալության է տրվող մասը

ԿԱՏԱՐՈՂ Կ. [illegible] /Կ. Քալոյան/

/ստորագրություն/

Փաստաթուղթը
բաղկացած է 3/երեք/
էջից:

Նոտար՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք, ք.Բերդ,
Լևոն Բեկի 5, Հեռ. (0267)2-37-79, (0267)2-10-81, Ֆաքս (0267)2-21-21 ,
berd.tavush@mta.gov.am

N 210
23 մարտ 2018թ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մինասյան

Հայտնում եմ Ձեզ, որ <<ՀՀ վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքով համայնքների խոշորացման արդյունքում Բերդ քաղաքը, Չինարի, Այգեձոր, Արծվաբերդ, Չորաթան, Մովսես, Նորաշեն, Վ.Կ. Աղբյուր, Պառավաքար, Վարագավան, Վ. Ծաղկավան, Չինչին, Տավուշ, Ն.Կ. Աղբյուր, Այգեպար, Նավուր և Իծաքար գյուղական համայնքները միավորվել են և ստեղծվել է Բերդի համայնքապետարանը:/ՀՎՀՀ-07620119, ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչություն, Հ/Հ 900385101101/:

Հաշվի առնելով, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ կետի միավորված համայնքը համարվում է միավորվող համայնքների իրավահաջորդը:

Կից ներկայացնում եմ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստի միասնական գրանցամատյանից քաղվացք <<ՀՀ Մավուշի մարզի Բերդի Համայնքապետարանի աշխատակազմ>> ՀԿՀ-ի պատճենը:

Առդիր 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հարություն Մանուչարյան

Կատ. Բաժնի պետ՝ Կ. Մարգսյան
2-21-21

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2017-11-28

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Համայնքային կառավարչական իրավաբանական անձ (Համայնքային կառավարչական հիմնարկ)

Գրանցման համար	97.181.995033
Հիմնադրման տարի	2017
Գրանցման ամսաթիվ	2017-11-28
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	50824554
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	07620119
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի ծածկագիր)	41185033
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	Լևոն Բեկի / Շ / 5 ԲԵՐԴ 4201 ՏԱՎՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	094656868

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար
Անուն Ազգանուն	ՀԱՍՄԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ ԴԱՎԹԻ
Անձնագրային տվյալներ	AH0617389 2008-07-02 056
Հասցե	ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. / Տ / 29 ԲԵՐԴ 4201 ՏԱՎՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ըստ 2017-11-24
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԹԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Համայնքային կառավարչական հիմնարկ (Համայնքային կառավարչական հիմնարկ)

Տեղեկություններ իրավահաջորդության/իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Պետական միասնական գրանցամատյանում գրանցված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ

Քաղվածքը տրամադրող՝ _____ ԱԼԲԵՐՏ ԳՅՈՉԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 28-11-2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ